

Ê Ø ´ ≈ ¶ ð à ô Â ° ≈ Û Î à Ô Ø Æ ò

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Ø³βi áó ì ³Ñ; Ô³¼³ñ»³Ÿ

ՀԱՄՓՈՐԴՈՒԹԵԱՆ ՆՄԱՆ

Աղօթել, ե՞րբ:

Երբ դանդաղ են պտտւում կեանքի անիւները, երբ հեռաւորութեամբ են ներծծուած կենսական կապերը, երբ բացակայութիւններով լի է մեր տունը, եւ քեզ մենակ ես զգում ճամփորդութեան մէջ դէպի Նա՝ որ միակն է:

Եւ կամ, ինչպէս ասում էին աշուղները, երբ ժամանակն է «վերջնանուագ սիրոյ», այսինքն՝ հեռաւոր սիրոյ, օտար աշխարհում զգացուած սիրոյ, երբ զգում ես քեզ աքսորում եւ, ինչպէս Երգ Երգոցի սիրուհին, փնտռում ես քո հեռաւոր սէրը:

Կամ էլ՝ երբ ուզում ես խմել երկնքի կապոյտը – քեզ երբեւէ պատահե՞լ է կամենալ տարածուել գետնին եւ խմել երկնքի կապոյտը, կամ աշնանը՝ շնչել կարմիր հագած ծառը:

Հեռաւոր երկրի սէր. սա՛ է աղօթքը, իմ համար:

Աղօթքը ճամփորդութիւն է: Հնարաւոր է խօսել աղօթքի մասին, հնարաւոր է աղօթել, ուխտագնացութեան պատկերների ներքոյ:

Աղաչել՝ յունարէնում նշանակում է «հասնել», ճամփորդել դէպի տուն: Աղօթողը նա է՝ ով հասել է տուն:

Տակաւին այժմէական է ներկայանում քրիստոնեաներին տրուած առաջին անունը. նրանք՝ որ ճանապարհինն են, նրանք՝ որ փողոցինն են¹: Նրանք՝ որ գնում են, քայլում, ստեղծում են ճանապարհներ՝ որոնք նրանց տանում են մէկը դէպի միւսները եւ, բոլորը միասին, դէպի Աստուած. Աստուածը երբեք չեզրափակուած ճամփորդութիւնների:

Ճամփորդութեան փոխաբերական պատկերը. իրօք, աղօթքը «հոգու վերամբարձումն է դէպի Աստուած», հետեւաբար՝ ճամփորդութիւն:

Աղօթքը «ընկղմուելն է Աստոյ սիրոյ մէջ», ինչպէս ասում են դասական հեղինակները. կրկին՝ շարժում դէպի, ներթափանցում:

Եւ կամ, ինչպէս ասում էր Լէոպարդին, իր միաժամանակ աշխարհիկ եւ սրբազան գեղեցկագոյն բանաստեղծութեան մէջ. «Նաւաբեկութիւն է անսահմանութեան մէջ»:

Աղօթքը մի շարժում է:

Աղօթքը պատասխան չէ, այլ աքսորի երգն է նրա՝ ով այլեւս չի յանդուրժում աքսորը:

Չսպասենք մեզ լաւ զգալու՝ աղօթել սկսելու համար:

Մտքի եւ մարմնի բարօրութեան մէջ ծնւում են բնականոն խօսքեր, բնականոն մտքեր, կամ նաեւ նրբաճաշակ, փորձագէտ մտքեր: Ամենագեղեցիկ մտքերը, մինչգեռ, ծնւում են տառապանքի ժամանակներում, սիրոյ արիւնից, ցաւից ու վշտից:

Աստուածաշունչը մի գիրք է, որից արիւն է ծորում: Ահա այս պատճառով է, որ լի է աղօթքներով:

Սկզբում աղօթքը չէ, սկզբում կեանքն է:

Հարկաւոր է ապրել իմանալ՝ աղօթել իմանալու համար: Հարկաւոր է շատ կենսալի լինել՝ լաւ աղօթելու համար:

Արեան խորհուրդ. այս կարմիր հոսքը, որն իրենում պարունակում է կեանքը, Հին Կտակարանի համաձայն²: Եւ Քրիստոս Ինքը մի խորհուրդ է, որից արիւն է հոսում:

«Եբէլէ՛ արիւնն աղաղակու՛մ է», ասում է Աստուած³: Եւ ամենաուժեղ ձայնն է, որ բարձրանում է երկրից, որ լցնում է երկինքը մեզնից բաժանող տարածքը, որ բախում է երկնքի դռները. ամենաուժեղ հնչողականութիւնն ունեցող խօսքն է, ամենաուժեղ հնչողականութիւնն ունեցող աղօթքն է:

¹ Գրծ 9, 2

² 2Օր 12, 23

³ Ծնդ 4, 10

«Per-sonans», հնչող, միաժամանակ խորհրդանշան եւ անձ լինելու աստիճան: «Persona», անձ, ինչ որ մի ձայնի կողմից ներթափանցուած լինելն է¹:

Սկզբում կեանքն է, մերը եւ պատմութիւնը, եւ մենք այն ճանապարհ ենք դնում դէպի Աստուած, դէպի մի ա՛յլ աշխարհ. արիւնոտ անապատից, ինչպիսին որ եղել է եւ ինչպիսին որ է, դէպի այնտեղ՝ ուր չկայ այլեւս ո՛չ ողբ, ո՛չ լաց, ո՛չ արտասուք²:

Ուրեմն, աղօթելու համար, ես պէտք է վերագտնեմ ինձնում դարնան արիւնը, երբ շարժման մէջ է վերադրւում փափաքների ժամացուցանակը, երբ շարժման մէջ է վերադրւում իմ ուժականութիւնը, յոյսը, ապագան, ուշադրութիւնը:

Գարնան արիւնը դէպի վեր է մղում կեանքը, այն մղում է դէպի իմ կողմը. երբ ինձնում վերագտնում եմ ընդունակութիւնը ~ ես նոյնպէս ~ լսելու Աբէլի արեան աղաղակը: Յայնժամ վերադառնում եմ անձ լինելու, ինչպէս ճշգրիտ կերպով մատնանշում է այս եզրը. ներթափանցուած իրականութիւն, սիրտ՝ որից ներս է թափանցել մի ձայն: «Persona» էր կոչւում նաեւ այն դիմակը, որ լատինական թատրոններում օգտագործւում էր ձայնի հնչողականութիւնը ուժգնացնելու նպատակով, ձայն՝ որ ներթափանցում է ու աճում:

Այսպիսի՛ն պէտք է որ մենք լինէինք. սիրտ՝ որից ներս թափանցում են սիրոյ, աղօթքի, դարնան արեան հայցեր:

«ԻՆՉՊԷՍ»Ը ԵՒ «ԻՆՉ»Ը

«Ո վ ասո՛ւմ է՝ Բէ բնակո՛ւմ է Քրիստոսի մէջ» – ահա թէ ի՛նչ է աղօթքը. բնակուել Աստուծոյ մէջ – «պէտք է վարո՛ւի այնպէս՝ ինչպէս Նա էր վարո՛ւմ»³:

Նախընտրել նրանց՝ որոնց Նա էր նախընտրում. լինել ժողովրդի հոգսերը թեթեւացնող, ինչպէս ինքը, լինել իր խօսքերի արձագանքը, իր մտքերի հայելացումը: Քրիստոնէութեան գաղտնիքը պարփակուած է հետեւեալ յարաբերական դերանունի մէջ. «ինչպէս»: Շատ խոնարհ մի բառ, որ հնչում է ամբողջ Աւետարանում:

«Աշակերտը պէտք է վարո՛ւի այնպէս՝ ինչպէս Նա էր վարո՛ւմ»⁴: «Աստուծոյ եղե՛՛ք՝ ինչպէս Հայրը»⁵. «Ողորմած եղե՛՛ք՝ ինչպէս Հայրը»⁶: «Քո համէր ինչպէս երկնի՛ւմ՝ այնպէս ել երկրի վրայ»⁷: «Ինչպէս ես յետ Հեղ վարո՛ւեցի, այնպէս ել դու՛ն իրար Հեղ վարո՛ւեցե՛՛ք»⁸. «Սիրեցե՛՛ք միմեանց՝ ինչպէս ես յեղձնեցի»⁹:

Ինչպէս Քրիստոս, ինչպէս երկիրքը, ինչպէս Հայրը. սա՛ է մեզ շրջապատող իրականութիւնների բոցը, արարքների ու գործերի բոցը վերագտնելը:

Աղօթել՝ նշանակում է վերագտնել մեզ շրջապատող իրականութիւնների բոցը:

Եւ ներմուծել անսահմանութիւնը մեր ցածր հորիզոններից ներս, լուսամուտներ բացել աշխարհի այս պատմութեան պարսպի ներսում: Բնակուել երկրի վրայ՝ կրելով երկնքի այն մասնիկը, որ կարգի է դնում երկիրը:

¹ Հեղինակն առընչութեան մէջ է դնում լատիներէն երկու եզրեր. «personans» (հնչող) եւ «persona» (անձ):

² Յյտ 21, 4

³ 1Յվհ 2, 6

⁴ 1Յվհ 2, 6

⁵ Մտթ 5, 48

⁶ Ղկս 6, 36

⁷ Մտթ 6, 10

⁸ Յվհ 13, 15

⁹ Յվհ 15, 12

«Ինչպէս» ապրելը կեանքն է: Ինչպիսի ոճով, ինչպիսի կրքով, ինչպիսի խորութեամբ, ինչպիսի ուրախութեամբ, որքան երկնքով:

Կեանքը չի կայանում նրանում՝ թէ ինչ ես անում, այլ՝ թէ ինչպէս ես անում: Աղօթքի ճշմարտութիւնը կայանում է նրանում, որ բնակուես երկնքում եւ երկինքը վերցնես որպէս երկրի չափանիշ: «Ով ասում է՝ Թէ բնակում է Քրիստոսի մէջ, պէտք է վարուի այնպէս՝ ինչպէս Մա էր վարում»¹:

«Ինչպէս»ը աւելի կարեւոր է՝ քան «ինչ»ը: Քո կեանքը կախումնաւոր չէ կատարած դործից, այլ՝ թէ այն ինչպէս ես կատարում: Կարող ես լինել ուսուցիչ կամ խոհարար, քահանայ կամ ինչ որ մի ուրիշ պաշտօնեայ, կարեւոր չէ՝ թէ ինչ ես անում, աւելի կարեւոր է՝ թէ ինչպէս ես անում:

«Եթէ չես կարող եղեւնի լինել լեռան լանջին,
հովտում աճող եղէգ եղիր,
բայց եղիր լաւագոյն փոքրիկ եղէգը
առուակի ափին:
Եթէ չես կարող ծառ լինել,
եղիր թուփ:
Եթէ չես կարող մայրուղի լինել,
եղիր արահետ:
Եթէ չես կարող լինել արեւը,
եղիր աստղերից մէկը:
Բայց միշտ ձգտիր լինելու լաւագոյնը
այն բանի՝ որ կարող ես լինել»:

Մարթին Լութեր Քինգ

Աշխատիր բացայայտել նախագիծը, որ կանչուած ես դառնալու, եւ կրքոտ հրայրքով գործի լծուի՝ կեանքում այն իրագործելու համար:

Բոլորը չեն կարող արեւ, ծառ, մայրուղի լինել: Թանկարժէք եւ գեղեցիկ են նաեւ թուփը, եղէգը, արահետն ու աստղը:

Կարեւորը սեփական պարտականութիւնները ազնիւ հոգիով ու կրքոտ հրայրքով կատարելն է, իրագործելով այն ծրագիրը՝ որ Աստուած գծել է ամբողջ արարչութեան մէջ:

«Ինչպէս»ը, այս փոքրիկ դերանունը, իրենում պարունակում է գործերի ու արարքների ծրագիրը, պարունակում է նպատակակէտը, գաղափարականը:

Աղօթքը մեզ ասում է, որ մեր չափման միաւորը ուրիշները չեն, ստացած համաձայնութիւնը չէ, ընդունած յարգանքը չէ, կանոնները չեն: Մեր չափման միաւորը Յիսուս Նազովրեցին է: Ազատութեան մեր պաշարը, որից երբեք չենք կարող եւ չենք կամենայ հրաժարուել: Աղօթքը Աստուծոյ հետ չափուելն է:

Նրա հետ ես մենամարտում, ինչպէս Յակոբը հրեշտակի հետ²: Եւ գիշերուայ մէջ այնքան են զրկապինդ մնում, որ վերջիվերջոյ չեն կարողանում այլեւս զանազանել՝ թէ մենամարտում են կամ թէ սիրում, թէ խօսքը պայքարի մասին է կամ թէ սիրոյ: Եւ Յակոբը խնդրում է իր ընդդիմադիր մրցակցի օրհնութիւնը:

ՄԱՍԿՈՒՄԻՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ՆԵՂ ԿԷՏՈ

Մեծ աստուածաբան Օսքար Քուլմանը փրկութեան պատմութիւնը պատկերացնում է որպէս մի մեծ « X »:

¹ 1Թվհ 2, 6

² Ծնդ 32, 25-30

Դէպի վեր բացուող երկու թեւերը մատնանշում են ընդհանրականութիւնը, Ադամն ու Նոյը, որն ապա աստիճանաբար սեղմւում է. Իսրայէլի ժողովուրդը, նրա տասներկու տոհմերը. յետոյ, աքսորից վերադարձին, միայն երկու տոհմ, հաւատարիմ փոքրիկ մնացորդը. ապա մեսիանական մի քանի շարժում, եւ Յիսուս՝ Իր տասներկու Առաքեալների խմբով ու բազմաթիւ կանանց հետ, որոնք վերածւում են միայն չորսի՝ Զիթենեաց պարտէզում, ապա միայն Յիսուս՝ Խաչի վրայ:

Սա՛ է այն կէտը, ուր ամէն բան կցւում ու շողկապւում է, « X »-ի կենտրոնը, ինչպէս աւազային ժամացոյցի նեղ կէտը, որտեղից անցնում է ամբողջ պատմութիւնը:

Կենտրոնական կէտը, պակասած ու նուազած, որից սակայն մեկնում է մի նոր ընդհանրականութիւն. կանայք Զատիկի առաւօտեան, էմմաւուսի աշակերտները, յայտնութիւնները, Հոգին, որ Պենտեկոստէի օրը միաւորում է բոլոր լեզուները, բոլոր ազգերին քարոզելու պատուէրը. «Գնացէք մինչեւ աշխարհի ծայրերը»¹, կրկին ճանապարհ ընկէք՝ հանդիպելու համար բոլոր ժամանակների Ադամին. եւ մեծ « X »-ը ընդարձակւում է մարդու եւ պատմութեան չափով:

Միեւնոյն պատկերը վաւերական է նաեւ աղօթքի համար: Աղօթքը փրկութեան պատմութեան նման է. պատմութիւն է ստեղծում: Աղօթողը այն նուազագոյն եւ կենտրոնական կէտն է՝ ուր, իր խօսքի մէջ եւ իր ձայնի մէջ, փոխադրուած է հազարամեակների ու աղքատների աղաղակը. որտեղից աղօթողը կրկին ճանապարհ է ընկնում՝ պատմութիւն ստեղծելու մի ծրագրով, որը գործակից է դարձնում բոլոր ժամանակների Ադամին:

Աղօթել՝ նշանակում է գնալ կենտրոնական կէտին, աւազային ժամացոյցի բերանին, պատմութեան կորիզին, այսինքն՝ Քրիստոսին:

Պատմութիւնը ցորենի հատիկի նման սերմանւում է աղօթքի մէջ եւ ապա նրանից դուրս է գալիս որպէս ցօղուն, որպէս հասկ, որպէս հասկի վրայ ուռճացած հատիկ:

Աղօթքը ուխտագնացութիւն է ընդհանրականից դէպի Ընդհանրականը, անցնելով անհատ աղօթողի ներքին խորութիւններից:

Աղօթքը փրկութեան պատմութիւն է, որովհետեւ փրկութիւնը, Աստուածաշնչի համաձայն, ունի բնորոշ երկու յատկանիշ, երկու ենթանուն.

«**Կապարձութիւն**» այն ամէնից՝ որ չի թոյլատրում քեզ քայլել ուղիղ, բարձր պահած հայեացքով. ազատագրում բոլոր փարաւորներին:

«**Կապարձութիւն**», Աստուծոյ կամքը՝ հաղորդութեան մէջ լինելու ապրող բոլոր էակների հետ:

Աղօթողը դառնում է փրկութեան տեսանելի նշան, ազատագրուած եւ հաղորդութեան մէջ ապրող մարդ, ազատութիւնների եւ դաշինքի մարդ:

Այսպիսին է աղօթքը. փրկութեան պատմութիւն:

Գալիս է աշխարհը, անցնում է ասեղի ծակով,

որն աղօթողի սիրտն է եւ խօսքը:

Աւազային ժամացոյց, ուր

հատիկ առ հատիկ

ծորում է պատմութիւնը.

Աստուծոյ սերմանած դաշտ,

բաց ու ընդարձակ երկիր,

ընդունակ՝ սնուցելու լոյսը:

¹ Մրկ 16, 15

ՎԵՐԼԿԱԶՄԵԼ ԿՈՏՐՈՒԼՈՒԹՅՈՒՆ

Լատիներէն «*prex*» (աղօթք) եզրը առաջացել է «*prek*» հին իրանական արմատից, որ արտայայտում է խնդրանքի, ստանալու ջանքի իմաստը, բայց միմիայն խօսակցական միջոցների կիրառմամբ, միմիայն խօսքերի օգնութեամբ:

«*Prex*»ը վերին հեղինակութեանն ուղղուած խնդրանքն է, ինչ որ մի բան ստանալու ակնկալութեամբ: Բայց ի՞նչ բան:

Այս հարցի պատասխանը մեզ յուշում է «*prex*»ի լեզուական ընտանիքին պատկանող եզրերից մէկ ուրիշը, որ է լատիներէն «*procus*» բառը: Այս եզրը մատնանշում է այն անձը, որը դիմում է ընտանիքի հօրը՝ նրա դասերը իրեն կին խնդրելու համար, այսինքն՝ ամուսնութեան խնդրանքով. հայցողն է, նա՛ որ «խնդրում է բարեհաճութիւն», խնդրում է հաճելի, ընդունելի լինել: Իսկ եթէ տարօրինակ է թւում, որ աղօթքը այս «բարեհաճութեան խնդրանքն» է, յիշեցնում ենք Սուրբ Պատարագի համանման խնդրանքը. «Թող հաճոյ լինեն Քեզ, Տէր, այս ընծաները»: Եւ կամ այս միւսը. «Սիրով հայիր Քո Եկեղեցուն»: «Սիրով հայիր». սիրահարի բառապաշարն է:

Սուրբ Պատարագի կանոնի մէջ ընդելուզուած այս բեկորներում նոյնպէս ի յայտ է գալիս «*procus*»ի հին արմատը, նրա՛ ով մօտենում է ընտանիքի հօրը եւ խնդրում է հաճելի լինել, խնդրում է ընդունելի լինել, ամուսնական միութեան ակնկալութեամբ:

«*Procus*»ի եւ աղօթողի վերջնական նպատակակէտը նոյնն է, սիրալի հաղորդութեան նոյն ծրագիրը:

Հետեւաբար, աղօթքը է.

1. խնդրանք,
2. միայն խօսքի միջոցով,
3. ուղղուած՝ ընտանիքի հօրը,
4. ստանալու համար,
5. «շնորհ»ը.

ստանալու համար «բարեհաճութիւնը». խորքում՝ ստանալու համար միութիւնը:

Աղօթքն, ուրեմն, «ազգակցական կապ»ի մէջ է՝ ամուսնութեան խնդրանքի, հաճելի եւ ընդունելի լինելու խնդրանքի հետ:

Եւ այստեղ հասկանալի է դառնում Երգ Երգոցի խորին արմատը, ուր հոգու դէպի Աստուած ուղղած աղօթքը ~ վերջնական վերլուծութեամբ ~ բարեհաճութեան խնդրանք է, միութիւն ձեռքբերելու խնդրանք է, սիրոյ խնդրանք է:

Այս աղօթքի բարձրագոյն օրինակ է Հայ Վանականութեան դաւանած բանաձեւը. «Կամենում եմ մէկ լինել Քեզ հետ»: Միանալու կիրք, սա՛ է սէրը: Իսկ աղօթքը՝ արձագանքը ամուսնութեան խնդրանքի:

Մի երկրորդ եզր, որ մատնանշում է աղօթքը, «աղաչանք»ն է:

Աղօթել—աղաչել. խօսքը վերաբերում է երկու գրեթէ նման հասկացողութիւնների, որոնք միմեանցից տարբերում են միայն զգացմունքի սաստկութեամբ:

Բայց այս միակերպութիւնը աղքատացնում է բառերի իմաստաբանական եւ հետեւաբար՝ կենսական հարստութիւնը:

Լատիներէնում, նա՛ որ աղաչում է, կոչում է «*sup-plex*»:

Այս «*supplex*»ի բացատրութիւնը տրւում է «*plex*» վերջաւորութիւնն ունեցող մի շարք ածականներով:

Պարունակուած գաղափարը «ծալել»ու գործողութիւնն է:

Իրօք.

simplex, պարզ, նա է կամ այն է՝ որ ծալուած է միայն մէկ անգամ.

duplex, կրկնակի, նա է կամ այն է՝ որ ծալուած է երկու անգամ.

complex, նա է կամ այն է՝ որ ծալուած է ուրիշի հետ միասին, գործակից կամ մեղսակից, սերտորէն կապուած, հիւսուած.

plecto, այն բայն է՝ որ մատնանշում է հիւսելու, ոլորելու, միասին կապելու համար ծալելը.

ampecto, ինչ որ մի բանի կամ ինչ որ մէկի շուրջը ծալուելն է, գրկախառնուելը, ողջագուրուելը.

implecto, ընդգրկուած, ներգրաւուած լինելն է:

Արդ, այս շարքին համանման եղանակով, «supplex» եզրը ներկայացնում է աղաչող-աղօթողի մարմնական կեցո-ածէլը, որ ծալուած է sub, ծալուած է «պէտքի մօտ», ներքեւ¹:

«Supplico» բայը նշանակում է. աղաչողի կեցուածք ընդունել:

Աւելի լաւ հասկանալու համար այս «ոտքերի մօտ ծալուել»ու իմաստը, քննենք աղաչանքը մատնանշող յունարէն եզրերի ընտանիքը.

«hikétes», նա՝ որ աղաչում է, առաջացել է «híko» բայից, որ նշանակում է հասնել:

Աղաչողը նա է՝ որ հասնում է, նա՝ որ հասնում է հպուելու:

Շատ յաճախ, հին յունարէնում, նա՝ որ աղաչում է, նա է՝ որ հասնում է հպուելու ծնկներին: Սա հասկանում ենք պատերազմական մի սովորութիւնից, որին ծանօթ ենք հոմերոսեան դիւցազներգութիւնից. մարտիկը՝ որ նեղ վիճակի է մատնուել թշնամու կողմից, որ ենթակայ է սպանուելու վտանգին եւ ուզում է խնայուել, սեփական կեանքն ազատելու համար պէտք է հասնէր հակառակորդի ծնկներին հպուելու, նախ՝ քան միւսը, պատերազմի կատաղի թափով, կը խոցէր իրեն: Հասնել ծնկներին հպուելու:

Ուրեմն, աղաչողը նա է՝ որ հասնում է հպուելու, նա՝ որ հասնում է ոտքերին, որ ծալուած է, եւ որ կապում է միասին, որ հիւսուած է աղաչանքն ընդունող Աստծոյ հետ միասին:

Այս եզրաբանութիւնն իրենում պարունակում է բաժանումի եւ կապակցումի մի սկզբնական գաղափար:

Սրբազան իրականութիւնների մեր առաջին փորձառութիւնը Աստծոյ հեռաւորութիւնն է, կամ՝ մեր հեռաւորութիւնը Նրանից:

Կրօնի առաջին գործողութիւնը հեռաւորութեան գերազանցումն է:

Բայց միեւնոյն իրողութիւնը տեղի է ունենում նաեւ անձնական յարաբերութիւններում, երբ առաջին զգացումը հեռաւորութիւնն է, իսկ առաջին յանձնառութիւնը՝ նրա գերազանցումը: Հեռաւորութիւն, որ կարող է լինել տարիքի, մշակոյթի, ծագման միջավայրի, բնաւորութեան: Հասարակութիւն ստեղծելու եւ կրօն ստեղծելու առաջին գործը կայանում է հեռաւորութեան գերազանցման մէջ:

Նոյն ինքն «կրօն» եզրը (re-ligione, կցել, միաւորել) կապակցութեան մէջ է «supplex»ի գաղափարի հետ, նրա՝ ով կապում է Աստծոյ հետ:

Կեանքի սկզբում ներկայ է կոտորուածքի, բեկման մի փորձառութիւն:

Փրկութեան բոլոր պատմութիւնները ծնւում են մի կոտորուածքից, որն աղաղակում է վերակազմութեան իր կարիքը. մի սկզբնական մեղքից, որը բացայայտ, առարկայական է դարձնում ճանապարհը՝ որ հարկաւոր է անցնել՝ Աստծուն հպուելու հասնելու համար:

Աղօթքն, ուրեմն, ուխտագնացութիւնն է բացակայութեան դաշտերի ու տարածքների միջով, մինչեւ հասնելը տուն, մինչեւ օջախին հպուելու հասնելը:

¹ Ինչպէս խօսակցական հայերէնում նոյնպէս գործածում ենք «ոտքերն ընկնել» արտայայտութիւնը, որն աղաչելու լիազօր հոմանիշն է:

Այս պատճառով է, որ կրօնական բառապաշարում շատ է օգտագործվում «վեր» նախդիրը, որ նշանակում է կրկին, տակալին, մէկ անգամ եւս. վերա-կենդանացնել, վերա-կանգնել, վերա-դառնալ, վերա-կազմաւորել, վեր-սկսել եւ այլն:

Այս նախդիրը լեզուաբանական իմաստաբանական մնացորդը, յիշատակն է այդ կոտորուածքի, այդ ճեղքի, որն հարկաւոր է լցնել:

Եղել է մի ընդհատում, եւ այժմ ես վերստին ճանապարհ եմ ընկնում, վերստին շնչում եմ, վերսկսում եմ նախկին յարաբերութիւնները:

Կրօնը ընդհատումը գերազանցելն է եւ «վերադառնալը տուն», ճանապարհն է մեծ վերադարձի, ինչպէս մեզ ցոյց է տալիս աղաչանքի յունարէն բայը, «hiko», որ պարունակում է հասնելու եւ միաժամանակ աղօթելու գաղափարը. աղօթքը վերադարձն է տուն: Աքսորի ավարտը:

Յիրաւի, երբայցերէնում դարձի եկողը կոչւում է «վերադարձի վարպետ»: Դարձը վերադարձ է¹:

Սկզբնական մեղքի յիշատակը մնացել է նաեւ լեզուաբանութեան մէջ, մնացել է այն գործիքների ու միջոցների մէջ, որոնք բոլորս գործածում ենք Աստուծոյ, կրօնի մասին խօսելու համար:

Կրօնական խօսակցութիւնը սկիզբ է առնում մի կոտորուածքից:

Քրիստոնէական բառապաշարում մեղքը ճիշտ խզումն է Աստուծոյ հետ հաղորդութեան, շնորհի կեանքի, որն Աստուծոյ կեանքն է՝ համակրանքով փոխանցուած նրան՝ ով ունի Աստուծոյ բարեհաճութիւնը:

Սա է «cháris»ը, շնորհը: Ճիշտ այն՝ ինչ աղօթողը հայցում է. հաճոյ լինել, հաճելի համարուել, միանալ:

Կրօնի մեծ գործը սահմանները կտրել անցնելն է, բաժանարար տարածքները կապակցելը:

Այս ճանապարհի երկայնքով է մեզ առաջնորդում աղօթքը, մինչեւ հասնելը, մինչեւ լինելը աքսորեալի վերադարձը տուն:

«Եւ կը Հասնենի՞րո՞ւն, ուր Դո՞ւս ապաստում ես մեզ», աղօթում է Արեւմտեան Եկեղեցին Սուրբ Պատարագի ընթացքում: «Բախեցի՞ք եւ յեր առաջ կը Բացուի», ասում է Յիսուս², մեծ վերադարձի ճանապարհի վերջաւորութեան դնելով մի դուռ եւ մի տուն, որպէս դէպի կեանքն ուղղուած մեր գաղթի նպատակակէտ:

ՀԻՄՆԱՆԻԹԻ ՇՈՒՐՁ ՉՈՐԱ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄՆԵՐ

Աղօթքի յունարէն բառապաշարը, որ գործածում է Պօղոս Առաքեալը, բաւականին մանրամասն է. Տիմոթէոսին ուղղած առաջին նամակում գրում է.

«Երբ, ամէն Բանից առաջ խնդրում եմ, որ աղօթելի, խնդրանի, պաղարանի եւ Բոճոթիւն մարտցելի Բոլոր մարդկանց Համար, Բագաւորների եւ Իշխանութեան Բլուխ կանգնած Բոլոր մարդկանց Համար, որպէսզի խաղաղ եւ Հանգարար կեանի վարելի կարարեալ ասորուածապաշտութեամբ եւ պարկէշտութեամբ»³:

«Յանձնարարում եմ ձեզ նախեւառաջ աղօթել Բոլոր մարդկանց Համար ... »:

Պօղոս Առաքեալը մեզ դուրս է հանում սերտորէն հոգեբանական, հոգեւոր տարածաչափութիւնից, մատնանշելու համար աղօթքը ո՛չ որպէս հոգու վիճակ, այլ որպէս աշխատանք, գործ, մի բան՝ որ պէտք է անել:

¹ Սիբ 17, 19

² Մտթ 7, 7

³ 1Տմ 2, 1-2

Պողոս Առաքեալը գործածում է Գործնական (կոնկրետ) մի բայաձև. «աղօթի անել», միաժամանակ պատկերասփռում կատարելով «մեղք-խեղճ» վրայ:

«Եմեն Բանից առաջ աղօթիներ արել է թուր մարդկանց Համար. թուր նրանց Համար՝ ովքեր իշխան-խեղճ գլուխ են»:

Գործնականութիւն, ամբողջականութիւն եւ մի կենսական նպատակ (որպէսզէ կարողանանք Հանդարտ ու խաղաղ կեանք ունենալ):

Սրանք են երեք տարրերը, որ Պողոս Առաքեալն առաջադրում է:

Գործնականութիւն: Աղօթքը զգացում չէ, ինչ որ մի բան չէ՝ որ զգացում է, ինչ որ մի բան է՝ որ արւում է:

Ունի իմ բոլոր ենթակայական ու մտացածին բաւիղներից աւելի հաստատուն, աւելի վստահեցուցիչ առարկայականութիւն:

Աղօթքը մի դէպք է, իրադարձութիւն, իրողութիւն՝ որ «պեղծում» է: Ինչպէս Աստուծոյ խօսքը «պեղծում» է Ծննդոցում, նմանապէս՝ նոյն խօսքը աղօթքի մէջ ոգեկոչում է, համախմբում, վերամիաւորում եւ գոյութիւն հաղորդում:

Քերթողական արուեստը, որ խօսքի մարդկային գազաթնակէտն է, նաեւ արուեստն է նոր պատկերներ գոյացնելու, նոր յարաբերութիւններ գոյակների միջեւ: Աստուծոյ խօսքը եւ մարդու խօսքը ստեղծում են:

Ամբողջականութիւն: Աղօթքը ստեղծող խօսք է: Ստեղծում է յարաբերութիւն երկնքի եւ երկրի միջեւ, հասարակութեան եւ Աստուծոյ միջեւ. հասարակութեան եւ ամբողջութեան միջեւ, անհատի եւ մարդկութեան միջեւ. «... աղօթեցէք ի նպաստ բոլոր ... , նախեւառաջ ... , բոլոր նրանց համար ... »: ստեղծում է յարաբերութիւնների մի կառոյց: Շրջանառութեան մէջ է դնում սէրը:

Աղօթքը ստեղծում է հաղորդութեան մի կառոյց, աշխարհի եւ մարդկային յարաբերութիւնների մի նոր ճարտարապետութիւն. այլեւս ո՛չ մրցակցութեան, այլ յարաբերութեան եւ հաղորդութեան:

Ուրեմն մտային ցրտածութիւնը, եռանդը, յուզմունքը, հոգեվիճակների բաւիղը, շատ աւելի նուազ արժեն՝ քան փաստը՝ որ աղօթքը հիմնում ու հաստատում է Արքայութեան պահեր, որոնց նպատակակէտն է «Թուանդակել ամեն Բան ի Քրիստոս»¹:

Աղօթքն, ուրեմն, մի իրականութիւն է՝ որ վերաբերում է փրկութեան պատմութեանը, ո՛չ թէ իմ անձնական զգացումներին:

Աղօթքը նման է միայնութեան վիճերի վրայով նետուած պարանի:

Աղօթքը միայնութիւնների մեր հօտի հովիւն է: Եւ այն առաջնորդում է հաղորդութեան ճանապարհով:

Աստուածաշնչեան քննարկուող տողի երրորդ տարրն աւելացնում է. «... որպէսզէ կարողանանք Հանդարտ եւ խաղաղ ապրել»:

Կեանքի այս որակաւորիչ ածականները բնորոշ են ժամանակի յունական եւ հռոմէական ամբողջ իմաստասիրութեանը, գաղափարականն են ստոյրիկեան իմաստասէրի. պատմութեան, բնութեան, ներաշխարհի օվկիանոսների ամբողջովին երբեք չխաղաղուած փոթորիկներից պատասպարուած մի կեանք:

Բայց այն՝ որ ամենակարեւորն է, այն է՝ որ աղօթքը որպէս նպատակակէտ ունի կեանքը: Այստեղ վերագտնում ենք Արարչագործութեան գազաթնակէտը: Սաղմոսների միեւնոյն գերագոյն խնդրանքն է. սաղմոսերգուն հայցում է միայն ապրել:

Աստուած որպէս աղօթքի նպատակ չի դնում հաճոյքը՝ որ ինքը կարող է դրանից քաղել. որպէս վերջին նպատակակէտ Աստուած չի դնում ինքն իրեն, այլ մարդու կեանքը, մի կեանք՝ որ պէտք է ապրուի մարդու փափաքի համաձայն, որ կարող է համապատասխանել Աստուծոյ փափաքին:

¹ Եփս 1, 10

Յայնժամ աղօթքը գնում է եւ վերադառնում, ըստ ընծաների փոխանակման օրէնքի, որն Ուխտի (այսինքն՝ դաշինքի) տրամաբանութիւնն է, որ որեւէ հաղորդութիւն, որեւէ հասարակութիւն ամրացնող եւ ոտքի վրայ պահող կառոյցն է:

Աղօթքը բարձրանում է երկինք եւ այնտեղից իջնում է, «*ուկեղէն օղակ՝ ժամանակի ու յաւիտենութեան միջեւ*», ինչպէս կ'ասէր Դաւիթ Մարիա Թուրուզոն, Արարչից արարածին գնում է ու գալիս:

Աղօթել՝ նշանակում է անցնել սահմանները, որպէսզի կեանքն անցնի: Որպէսզի մարդու եւ մարդու միջեւ, մարդու եւ Աստծոյ միջեւ, ներսի եւ դրսի միջեւ կեանքն անցնի:

Եւ անցնի նաեւ մարդու եւ արեւի միջեւ, որ «եղբայր արեւն» է. մարդու եւ երկրի միջեւ, որ «մայր երկիրն» է. մարդու եւ բուրմունքի միջեւ, որ նշանն է մի ներկայութեան:

Երգում էր Գերտրուդ Ֆոն Լը Ֆորտը. «*Մեր աղօթիները Խոշորանների նման Խոշոր են ու հեռանում, եւ նրանցից ոչ մէկը երբ չի վերադառնում պարասխան բերելու*»: Ճիշտ է:

Այս թռչունները, որ աղօթքներն են, ահօսում են միայնութիւնները եւ հիւսում են հաղորդութեան, հաղորդակցութիւնների մի ցանց: Եւ երկինքը լցւում է արահետներով: Եւ իւրաքանչիւր թռչուն, որ սլանում է վեր, մի քիչ աւելի է մօտեցնում երկիրը երկինքին: Եւ, փոխաբերութիւններից դուրս, իւրաքանչիւր աղօթք արդէն իսկ ստեղծում է ինչ որ մի բան, արդէն իսկ պատասխան է. օրերն ու երկիրը լցնում է հաղորդութեան մեծ ու փոքր դէպքերով:

Աղօթքը պատմութեան ծածուկ օրէնսդրութիւնն է:

Պատմութիւն՝ որ ստեղծւում է մարդու եւ Աստծոյ կողմից միասին, պատմութիւն՝ որին նախագահում է փոխադարձութեան եւ հաղորդութեան տրամաբանութիւնը:

Պօղոս Առաքեալը թուարկում է աղօթքի չորս տարբեր տեսակներ:

DÉESIS (ԽՆԴՐԱՆՔ, ՀԱՅՑ)

Այս եզրը իր արմատը գտնում է «*déō*» բայի մէջ, որ նշանակում է. ինձ պակասում է, կարիքն ունեմ, հեռու եմ գտնւում: Մեր փաստացի իրավիճակների, մեր ճնշող կարիքների աղքատութեան ճայնն է: Չայնն է մանկան, մարդու փոքրիկի, որն անընդունակ է սնուելու, անընդունակ է ամէն ինչի, բացառութեամբ արցունքների: Առաջին գիտելիքը, նորածնի առաջին իմացականութիւնը, միակ ունեցուածքը այս մշտապէս մանուկ իշխանի, որ մարդն է. արտասուելու պարգեւը, հեռաւոր սէրը, հեռու գտնուող մօրը պահանջելը. դէպի կեանքն ուղղուած աղաղակը, կեանք՝ որ չափազանց հեռու է: Եւ մայրն է՝ որ ոտքի է կանգնում ու պատասխանում, եւ Աստուած ինքն է՝ որ արթնանում է ու գալիս, պարզ ուշադրութեամբ՝ պարզին, խոնարհ ուշադրութեամբ՝ խոնարհին, կենսալի ուշադրութեամբ այն ամէնի նկատմամբ՝ որ կենդանի է: Որովհետեւ սէրը բխում է ուշադրութիւնից:

Ահա առաջին հայցը. *déesis*, մանկան մի ճիչ, կարելի է ասել. մանկան՝ որ ճանաչում է միայն արցունքների խօսքը: Լա՛ւ ուրեմն, աղօթքը պարփակուած է երկու աղաղակների մէջ. ծնունդ մանկան ճիչը. Քրիստոսի աղաղակը ինչի վրայ, այդ ինչի՝ որ նման է լքուած օրօրոցի, այլեւս առանց Հօր:

PROSEUCHÉ (ԱՂԱՉԱՆՔ)

Այս եզրը նշանակում է. ես ինչ որ մի բան փափաքում եմ, դիմելով նրան՝ ով կարող է: Կարիքից անցնում ենք փափաքին: Մարդը փափաքող էակ է: «*Մարդը մի արարած է, որ ծնուել է ջրից, այժմ վայրում է հողի վրայ եւ կը կամենար սաւառնել*» (Քաղանձակիս):

Մարդը մի արարած է, որ երազում է եւ որ հարցնում է «ինչո՞ւ»:

Փափաքը կեանքի նշանն է: Մայրերն իրենց որդիներին կերակրում են կաթով ու երազներով. կարիքի կաթը եւ փափաքի երազը: Եւ հոգին ողջ է քանի դեռ ունի փափաքներ ու ձգտումներ:

Հանգցնել փափաքները՝ նշանակում է դառնալ ներքինին: Քրիստոնեայի մեծ աշխատանքը փափաքները դարձի բերելն է, ո՛չ թէ ճնշելն ու ոչնչացնելը: Ուժականութիւնն ինքնին (կամ էներգիան) պէտք է կենսալի մնայ, պէտք է պարզապէս փոխի ուղղութիւնը:

Ես ինչ որ մի բան եմ փափաքում եւ ուղղում եմ ինձ դէպի Աստուած: Իսկ Աստուած փափաքների դաստիարակն է: Նրա դիմաց իմ բոլոր փափաքներն անցնում են հնոցի միջով, ազատում են զեռանգներից, մաքրագործւում են:

Ուրեմն, աղօթքը իմ փափաքների համապատասխանեցումն է Աստուծոյ կամքին:

Աղօթքը կերպարանափոխում է սիրտը: Իսկ եթէ սիրտը նոր է, մարդն ինքնին նոր է: Իսկ աշխարհը նոր է միայն այն դէպքում, երբ մարդը նոր է:

Աղօթքը փափաքի դպրոց է: «Հայր մեր»ը մեզ ուսուցանում է փափաքել: Փափաքը սկզբում կարճատես է եւ առանց խորքի, անբանական: Ինչպէս միայն մէկ աչքի տեսողութիւնը հնարաւորութիւնը չի տալիս գաղափար կազմելու հեռաւորութեան ու խորութեան շուրջ, նմանապէս աղօթքը հոգու երկրորդ աչքն է, որպէսզի, փափաքի հետ միասին, կարողանայ տեսնել կեանքի խորքը եւ ճիշտ տեսակէտում տեղաւորի փափաքի մոլթ առարկաները, զանազանելով էականն ու աւելորդը:

Աղօթքը սկսւում է կարիքի ճիշտով, արցունքների կանչով, իսկ յետոյ՝ փափաքին դիմելով: Իւրաքանչիւր աղօթքի մէջ պէտք է որ ինքս ինձ հարցնէի. ո՞րն է իմ կեանքի ամենահզօր փափաքը: Ո՞ր փափաքն եմ ուզում ազատել, ինչպէս թուիչք առնող թռչուն: Ո՞ր փափաքն եմ ջանալու կաղապարել, որպէսզի դառնայ սիրոյ սպասաւոր:

Սա՛ է խղճի իրական քննութիւնը. ո՛չ թէ փոքրիկ մտացրումների կամ արտասանուած ծանր խօսքերի, այլ տուեալ պահի ամենախոր փափաքի շուրջ: Որովհետեւ այդտեղից է, որ ծնւում է աղօթքը: Ո՛չ խօսակցականը, որի ընթացքում առանց մտածելու կրկնում են բանաձեւեր, այլ աղօթքը՝ որ բարձրանում է կեանքի խորքերից: Այն ուժերից, որ ծնում են ինձ եւ սպառնում են ինձ:

Այսպիսով, աղօթքի մէջ իրար են խառնւում արցունքներ ու երազներ, եւ կեանքը երգում է իր երգը:

ÉNTEUXIS (ԱՂՕԹՔ)

Այս եզրը իր սկզբնական իմաստով նշանակում է հանդիպում, այցելութիւն, ընդունելութիւն, յաճախում:

Եւ այս առաջնային իմաստը յարաբերութեան կրկին երեւան գալն է:

Նպատակակէտը՝ որին ձգտում է այս երրորդ եզրը, նպատակակէտը՝ որին հարկաւոր է հասնել, ինչ որ մէկն է եւ ո՛չ այլեւս ինչ որ մի բան: Աղօթքի նպատակն է հանդիպել Աստուծոյ հետ, այցելել Նրան: Իսկ Աստուած չի կարող երբեւէ պարզեւել մի բան, որի արժէքը նուազ լինի՝ քան ինքնին Պարգեւողը: Սա՛ է Նախախնամութեան իմաստը. «Լե՛ւե դո՛ւ՛, որ շար ե՛վ, գընդե՛վ Բարի պարգեւներ ցալձեր որդիներին, վանի՛ցս առաւելձեր Հայրը կը պարգեւի յեւ Սո՛րթ Հոգին ... »¹: Ահա վեհ եւ դժուարին անցքը. ինչ որ մի բանից անցնել ինչ Որ Մէկին, ինչ որ մի բան խնդրելուց՝ ինչ Որ Մէկին հանդիպելուն: Առարկաների գերազահութիւնից անցնել անձի գերազահութեանը: Անցնել շատ բաների համար մտատանջութիւնից – «Մարթա, Մարթա, շար Բաներով ես պատշաճ ... » – միակ

¹ ՂԿՍ 11, 13

անհրաժեշտ բանին – «Մարեամն ընդրել է այն՝ ինչն իրեննց երբեք չի վերցուի ...»¹: Ինչ որ մի բանից անցնել ինչ Որ Մէկին:

Խնդրանքը, որ գերակշռում էր պողոսեան եզրաբանութեան առաջին մասում, այստեղ սկսում է երկրորդական դառնալ: Ներկայ մնալով հանդերձ: Ինչպէս Յիսուս նոյնպէս կամեցաւ յիշեցնել. «Չեր Հայրը Գրե՛լ Բէ ինչի կարիքն ունէ՛լ»². դուք պարզապէս «ներկայ դարձրէ՛ք» ձեզ Հօր առջեւ, գոյացրէ՛ք հանդիպումը, եւ խնդրանքները բազմապատկելու կարիքը չի գագցուի: Նա արդէն իսկ հաշուում է քո մազերը³, հաշուում է քո արցունքները, եւ լոյսի անդրադարձները՝ որ դրանցում բանտարկուած են:

EUCCHARISTÍA (ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՄ, ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՄ)

Եզրը, որ սովորաբար թարգմանուում է «չնորհակալութիւն», աւելի ճշգրտորէն նշանակում է «երախտագիտութիւն», «գոհաբանութիւն»: «Եւքարիստիա» եզրը մատնանշում է պարզելի շրջանքը. մարդը խնդրել է, ստացել է ըստ կարիքների ու փափաքների, եւ այժմ վերադարձնում է տօնական տրամադրութեամբ ցնծացող մի սիրտ: Մարդու եւ Աստուծոյ միջեւ գնում ու գալիս է կկոցը, որ հիւսում է բերկրանքի կերպասը:

«Եւքարիստիա» եզրը բաղկացած է երկու բառերից, որոնք երկուսն էլ մատնանշում են բերկրանքը. «eu», որ երգեցիկ նախդիրն է «evangelo»ի (Աւետարան), բերկրալի ուրախ աւետիսի: Ապա «cháris» (չնորհ), որ ունի «chará»ի (ուրախութիւն) միեւնոյն արմատը, եւ նշանակում է շնորհալի, հաճելի ու ձրի պարգեւ: Այս երեք ածականների իմաստային հարստութիւնը լատիներէնում բխում է միեւնոյն արմատից, ուր «gratia»ն համապատասխանում է «cháris»ին. գեղեցիկ ու բարի պարգեւ, տրուած՝ առանց փոխարէնը որեւիցէ բան պահանջելու, եւ որ հազորդում է բերկրանք. «grazioso» (չնորհալի), «gratuito» (ձրի), «gradito» (հաճելի):

Երկնքում թերեւս աւելի հաճելի է «երախտագիտութիւն» բառը – որի հոգեւոր խոր դիրքորոշումը փառաբանութիւնն է, որովհետեւ Նա գոյութիւն ունի, որովհետեւ մենք գոյութիւն ունենք – աւելի՛ քան «չնորհակալութիւն»ը: Շնորհակալութիւն յայտնելու արարքում, իրօք, շարունակում է տեւել շահագրգռուածութեան ինչ որ մի մասնիկ, մինչդեռ երախտագիտութիւնը գովեստ է, փառաբանութիւն: Ուր կայ աւելի բերկրանք, այնտեղ կայ աւելի ճշմարտութիւն: Ինձ այլեւս չեն հետաքրքրում հմուտ ու մասնագէտ մարդիկ, ինչ ասպարէզում էլ որ գործեն: Իմաստակները ձանձրացրել են ինձ: Ես փնտռում եմ մէկին՝ որ գոհ լինի, մէկին՝ որ «եւքարիստիա» տօնակատարի իր կեանքով: Եւ փորձել՝ թէ արդեօք հնարաւոր է այլեւս գաղափարներ չփոխանակել գիտուն մարդկանց նման, այլ փոխանակել բերկրանք, որպէս իրական մարդիկ, իսկապէս քրիստոնէայ մարդիկ:

Պատմութիւնը գոհ մարդկանց կարիքն ունի, Եկեղեցին գոհ մարդկանց կարիքն ունի: Փնտռում է երջանիկ այր, փնտռում է երջանիկ կին: Որ ծիսակատարի կեանքի «եւքարիստիա»ն: Ահա՛, աւելի երախտագիտութիւն՝ քան շնորհակալութիւն, եւ փառաբանութիւն:

Փառաբանութեան ու գոհաբանութեան այս վերջին դասակարգին են պատկանում օրհնութեան, փառաբանութեան բոլոր աղօթքները. «Մեծացո՞ւցէ»ն, Յովհաննէս Մկրտչի հօր՝ Զաքարիայի օրհնութիւնը, «Զարթո՞ւցեալէս»ը, «Ասա՞օր լո՞ւսոյ»ն: Փառաբանութիւնը՝ քաղցրութեան դուստր աղօթքն է (Եւագր Պոնտացի):

¹ Ղկս 10, 41-42

² Մտթ 6, 32

³ Մտթ 10, 30

Հանդիպման հիմնանիւթին են պատկանում, մինչդեռ, Աստուծոյ կատարած աղօթքը Յայտնութեան գրքում. «Ահա, դուան առաջ եմ եւ բարո՞ւմ եմ»¹. Էմմաուսի աշակերտներինը. «Մեր Հեղ մնայ, Տէր»². Մարիամի կեցուածքը Բեթանիայում, կամ Յիսուսինը՝ երբ ասում է. «Ո՞ր ես եմ, նրանէ եւս ըող լինեն»³:

Փափաքին են պատկանում այն բոլոր աղօթքները, որ հայցում են ներում կամ փրկութիւն կամ սէր: Եւ տակաւին, Յիսուսի մեծ աղօթքը. հայցումը միութեան ու խաղաղութեան⁴:

Իսկ կարիքի մէջ ծնւում են հիւանդների, նրանց ազգականների ու մտերիմների բոլոր սպասումներն ու աղերսանքները: Կարիքը հրաշքի շեմն է, որով լի է Աւետարանը, որով տակաւին լի է յոյսը: Առաջին աղօթքին՝ «déesis»ին են պատկանում Աբէլի աղաղակը եւ Յոբի աղաղակը: Մինչեւ որ Աստուած ինքը դառնում է մի Յոբ: Եւ վերածաղկում է մեր արեան մէջ:

Եթէ, ինչպէս ասում է Քրիէրքրգաարդը, աղօթելը դառնում է շնչառութեան նման, աղօթքն ուրեմն անցնում է գիտակցութիւնից անդին, դառնում է Ֆիզիքական անհրաժեշտութիւն: Աղօթքը հոգու շնչառութիւնն է, եւ մեր բերկրալի աշխատանքը այս իրականութեանը գիտակից դառնալն է, գիտակցելը՝ որ աղօթքը նման է շնչառութեանը:

Երբեմն, առանց գիտակցելու, մեզնից կը բխի ապրելու բերկրանքը, որ գերագոյն «եւքարիստիա»ն է:



¹ Յյտ 3, 20

² Ղկս 24, 29

³ Յվհ 17, 14

⁴ Յվհ 17, 1-26